

2000 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ ՕԾՎԵՑ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԲԱՑՎԵՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Գուգարաց թեմի Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցու կահավորման համար 3000 ԱՄՆ դոլար է նվիրաբերել տեր և տիկին Սարգիս և Ալիս Սեթյան ընտանիքը:

2000 թ. դեկտեմբերի 10-ին թեմի առաջնորդ Սեպուհ Սրբազանի նախագահությամբ տեղի ունեցավ նորակառուց Ս. Սարգիս եկեղեցու զանգակատան խաչի օծման արարողությունը: Ավելի քան մեկուկես դար Վանաձորում նոր եկեղեցու զանգեր չէին ղողանջել: Օծումից հետո տեղի ունեցավ առաջնորդարանի բացման արարողությունը, որին ներկա էին մարզային և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Դեկտեմբերի 28-ին մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ Ս. Սարգիս եկեղեցու օծման արարողությունը և առաջնորդարանի բացումը: Արարողությունները կատարեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը և Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը: Արարողությանը ներկա էին մարզային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր և հարյուրավոր հավատացյալներ: Բոլոր ներկաներն օրհնեցին և արժանին մատուցեցին բարերարներին ու շինարարներին, ովքեր հինգ ամսում Վանաձոր քաղաքին և Գուգարաց թեմին պարգևեցին նմանօրինակ նվեր: Ի դեպ, ինչպես խոստացել էր Սեպուհ Սրբազանը, ամբողջությամբ պահպանվել են շենքի ճարտարապետական ուրույն ոճն ու արտաքին տեսքը:

Այսուհետ նորակառույց Ս. Սարգիս եկեղեցում, 2001 թ. հունվարի 6-ի Ս. Ծննդյան տոնից սկսյալ, ամեն կիրակի կմատուցվի Ս. Պատարագ:

Առաջնորդարանի շենքի առաջին հարկում կտեղակայվեն Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը, Երիտասարդաց, Տիկնաց միությունները: Կյանքի կկոչվի «Վերնատան» գաղափարը՝ կկազմակերպվեն գրական-մշակութային երեկոներ, հանդեսներ, որտեղ կհավաքվեն գրողներ, մշակույթի գործիչներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Հատկանշական է, որ այսօր արդեն Վանաձորում ամենօրյա ժամերգություններին կմիախառնվեն երկու՝ Ս. Աստվածածին և նորակառույց Ս. Սարգիս եկեղեցիների զանգերի ղողանջները:

Գուգարաց թեմի ողջ հոգևոր դասի, թեմի առաջնորդ, Գերաշնուրհ Տ. Մեսրուհ եպիսկոպոս Չուլջյանի և հավատացյալների անունից հայտնում ենք մեր խորին երախտագիտություն ու շնորհակալություն Ամենայն Հայոց Հայրապետին և ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին՝ իրենց ցույց տված օժանդակության և աջակցության համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Լոս Անջելեսի Ս. Սարգիս եկեղեցու Խաչատուրյան դպրաց դասի բոլոր անդամներին, հոգևոր հովիվ, Արժանապատիվ Տ. Նարեկ քահանա Մատարյանին, ատենապետ պարոն Սիմոն Աճըիլաչօղլուին, Սեթյան ընտանիքին և մեզ օգնության ձեռք մեկնած բոլոր հավատացյալներին:

Թող Բարձրյալն Աստված օրհնի և պահպանի համայն հայությանը, որն անմնացորդ սիրով ու ծառայությամբ միշտ կանգնած է Մայր Եկեղեցու և հայրենիքի կողքին:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ